

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԻՐԱՆԻ ԴԵՍՊԱՆԻՆ

Փետրվարի 13-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանի Հանրապետությունում Իրանի Իսլամական Հանրապետության նորանշանակ արտակարգ և լիազոր դեսպան Սեյեդ Ալի Սաղայիանին:

Շնորհավորելով դեսպանին նոր նշանակման առիթով՝ Նորին Սրբությունն արդյունավոր գործունեության իր բարեմաղթանքները փոխանցեց նրան: Վեհափառ Հայրապետը գոհունակությամբ նկատեց, որ դարավոր բարեկամական հարաբերությունները երկու ժողովուրդների միջև այսօր առավել զարգանում են՝ ընդգրկելով համագործակցության նորանոր ոլորտներ:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ի դեմս դեսպանի իր շնորհակալությունը հայտնեց Իրանի իշխանությունների հոգատար և բարյացակամ վերաբերմունքի համար Իրանում բնակվող հայորդիների հանդեպ: Նորին Սրբությունն ուրախությամբ արձանագրեց նաև, որ սերտ հարաբերություններ են ձևավորվել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և Իրանի Իսլամական Հանրապետության դեսպանատան միջև, ինչը համագործակցության նոր հորիզոններ է բացում հատկապես կրթական և մշակութային ոլորտներում:

Իր հերթին դեսպան Սեյեդ Ալի Սաղայիանը, շնորհակալություն հայտնելով ընդունելության համար, նկատեց, որ մինչ դեսպան նշանակվելը տարբեր պատվիրակությունների կազմում բազմիցս այցելել է Հայաստան: Դեսպանը հավաստիացրեց Նորին Սրբությանը, որ պիտի ջանքերը ծառայեցնի երկու պետությունների համագործակցության առավել սերտացմանը և ժողովուրդների բարեկամության ամրապնդմանը:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԵԱՀԿ ԳՈՐԾՈՂ ՆԱԽԱԳԱՀԻ ՀԱՏՈՒԿ ՊԱՏՎԻՐԱԿԻՆ

Փետրվարի 18-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանի Հանրապե-

տությունում գտնվող ԵԱՀԿ գործող նախագահի հատուկ պատվիրակ դեսպան Հեյկի Թալվիթիեին:

Ողջունելով պրն Թալվիթիեի այցը Մայր Աթոռ՝ Նորին Սրբությունն ուրախություն հայտնեց Հայաստանում նրան վերստին տեսնելու համար: Վերհիշելով Հեյկի Թալվիթիեի պաշտոնավարության տարիները Հայաստանում որպես Ֆինլանդիայի դեսպան՝ Վեհափառ Հայրապետը գոհունակություն հայտնեց Հայաստանի և Ֆինլանդիայի միջև սերտացող հարաբերությունների առիթով: Հայոց Հայրապետը նաև ներկայացրեց Հայ Եկեղեցու և Ֆինլանդիայի Ուղղափառ և Լյութերական Եկեղեցիների միջև առկա ջերմ հարաբերությունները:

Հանդիպմանն անդրադարձ կատարվեց նաև Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման հիմնախնդրին և Հայաստանում փետրվար 19-ին կայանալիք նախագահական ընտրություններին:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՀՈՒՆԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ ԿԱՐԱԿՈՊՈՒԼՈՍԻՆ

Փետրվարի 18-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.U.O.S.S. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հունաստանի Հանրապետության խորհրդարանի պատգամավոր Մաքսիմոս Կարակոպուլոսին և նրա գլխավորած պատվիրակությանը՝ ուղեկցությամբ ՀՀ-ում Հունաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպանի:

Հանդիպման ընթացքին խոսվեց հայ և հույն ժողովուրդների պատմական ընդհանրությունների և երկու պետությունների միջև առկա ջերմ բարեկամական կապերի ու համագործակցության մասին: Անդրադարձ կատարվեց նաև Հայ Առաքելական և Հույն Ուղղափառ եկեղեցիների եղբայրական հարաբերություններին: Այս առիթով Նորին Սրբությունը գոհունակությամբ նշեց, որ Մայր Աթոռի հինգ միաբաններ այսօր իրենց աստվածաբանական ուսումն են շարունակում Հունաստանի բարձրագույն կրթական հաստատություններում: Հայոց Հայրապետը նաև ի դեմս Հունաստանի խորհրդարանի պատգամավորի շնորհավորեց հույն ժողովրդին Աթենքի և Համայն Հելլադայի Արքեպիսկոպոս Նորին Ամենապատվություն Հերոնիմոս Բ-ին ընտրության առիթով:

Հանդիպմանն անդրադարձ եղավ նաև Հայաստանում փետրվար 19-ին կայանալիք նախագահական ընտրություններին:

Հանդիպմանը ներկա էր Մայր Աթոռի Միջեկեղեցական հարաբերությունների պատասխանատու Տ. Եզնիկ արքեպիսկոպոս Պետրոսյանը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ